



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ №-94

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության դատարանների աշխատակազմերի կողմից պետական տուրքի հաշվառման և տեղեկատվության տրամադրման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն ներկայացվող գանձված պետական տուրքի տեղեկատվության ձևի օրինակը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Որոշման պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը դնել ՀՀ դատարանների աշխատակազմերի ղեկավարների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ
21 փետրվարի, 2006թ.
ք.Երևան

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Դատարանի աշխատակազմի գրասենյակը /այսուհետ՝ գրասենյակ/ փաստաթղթերն ընդունելու ժամանակ ճշտում է պետական տուրքը ՀՀ դատարանների գանձապետական հաշվին վճարված լինելու հանգամանքը: Այն դեպքում, երբ պետական տուրքը վճարված է այլ հաշվեհամարին, դատարանի աշխատակազմի գրասենյակը մինչև հայցադիմումը (դիմումը) այլ փաստաթուղթը դատավորին, դատարանի պաշտոնյային հանձնելը կազմում է տեղեկանք այդ մասին և հանձնում հասցեատիրոջը:

Գրասենյակի տրված տեղեկանքը հիմք է պետական տուրքը սահմանված կարգով վճարված չլինելու հանգամանքի գնահատման համար:

2. Գրասենյակի կողմից վարվող փաստաթղթերի հաշվառման մատյաններում առանձին տողով նշվում է վճարված պետական տուրքի գումարի չափը, որն իր մեջ չի ներառում անդորրագրի վրա առկա մատուցված բանկային ծառայության գումարը:

3. Պետական տուրքի հաշվառումն իրականացվում է դատավորի կողմից վարույթ ընդունած գործերով և աշխատակազմի կողմից մատուցված այլ ծառայություններով: Պետական տուրքի հաշվառման ժամանակաշրջան է համարվում դատավորի կողմից գործը վարույթ

ընդունելու ամսաթիվը կամ մյուս դեպքերում՝ համապատասխան ծառայության մատուցման օրը:

4. Դատավորի կողմից գործը վարույթ ընդունելու ժամանակ, ինչպես նաև գործը դատավորի վարույթում գտնվելու ընթացքում վճարված պետական տուրքի հաշվառումը վարում է դատավորի օգնականը:

5. Մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 5-ը դատավորի օգնականը կամ այլ պաշտոնատար անձը դատարանի գրասենյակ են ներկայացնում տեղեկատվություն իրենց կողմից հաշվառված պետական տուրքի մասին:

6. Դատարանի գրասենյակը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը ամփոփում է դատարանի կողմից գանձված պետական տուրքի չափի և մատուցված ծառայությունների քանակի մասին տեղեկատվությունը և ներկայացնում դատարանի աշխատակազմի ղեկավարին:

7. Մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը գանձված պետական տուրքի մասին ամփոփ տեղեկությունները ՀՀ կառավարության 29.11.1997թ. թիվ 547 որոշման համաձայն ուղարկվում են ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայությանը: ՀՀ առաջին ատյանի դատարանները գանձված պետական տուրքի մասին տեղեկություններն ուղարկում են ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության տարածքային հարկային տեսչություն, մյուս դատարանները՝ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայություն:

8. Գանձված պետական տուրքի մասին տեղեկությունների օրինակները ՀՀ դատարանները ուղարկում են նաև ՀՀ վճարեկ դատարան:

9. Դատարանի աշխատակազմի հաշվապահություն կառուցվածքային ստորաբաժանումն օժանդակում է դատարանի գրասենյակին պետական տուրքի հաշվարկման աշխատանքներում:

10. Դատավորի վարույթից դուրս մատուցվող ծառայությունների դիմաց պետական տուրքի գանձման պարտականությունը կրում է ծառայություն մատուցող պաշտոնատար անձը:

Օ Ր Ի Ն Ա Կ

ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն ներկայացվող գանձված պետական տուրքի տեղեկատվության ձևի

Հավելված

ՀՀ կառավարության 1997 թվականի
 նոյեմբերի 29-ի թիվ 547 որոշման

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՀՀ _____ դատարանի կողմից ___-րդ եռամսյակի ընթացքում
 գանձված պետական տուրքի մասին

Հ/Հ ը/կ	Կատարված գործողությունների մատուցված ծառայությունների ընդհանուր անվանումը	Կատարված գործողությունների մատուցված ծառայությունների քանակը		Գանձված պետական տուրքի գումարը /հազ. դրամ/		Գումարների փոխանցման բանկային հաշվի համարները	Ծանոթագրություն
		տվյալ եռամսյակում	տարվա սկզբից	տվյալ եռամսյակում	տարվա սկզբից		
	1	2	3	4	5	6	7
1.	Դատարան ներկայացվող հայցադիմումների, դիմումների /կամ բողոքների համար/	նշել՝ <u>տվյալ ժամանակաշրջանում</u> վարույթ ընդունված գործերի քանակը	նշել՝ <u>տարվա սկզբից</u> վարույթ ընդունված գործերի քանակը	նշել՝ <u>տվյալ ժամանակաշրջանում</u> վարույթ ընդունված գործերով գանձված պետական տուրքի չափը	նշել՝ <u>տարվա սկզբից</u> վարույթ ընդունված գործերով գանձված պետական տուրքի չափը	նշել՝ պետական տուրքի հաշվեհամարը (ներքև) /900005016010, 900005169264/	-
2.	Գործի նյութերի, դատարանի որոշման,	նշել՝ <u>տվյալ ժամանակաշրջանում</u> մատուցված	նշել՝ <u>տարվա սկզբից</u> կատար	նշել՝ <u>տվյալ ժամանակաշրջանում</u> մատուցված	նշել՝ <u>տարվա սկզբից</u> մատուցված ծառայություն	նշել՝ պետական տուրքի հաշվեհամարը (ներքև)	-

վճռի պատճենը տրամադրելու և համար	ծառայություն երի քանակը	ված գործող ությունն երի քանակը	ծառայություն երի արդյուն քում գանձված պետական տուրքի չափը	նների արդյուն քում գանձված պետական տուրքի չափը	/900005016010, 900005169264/	
Ընդամենը	-	-	-	-	-	-

Աշխատակազմի ղեկավար _____ Ա.Ա. Կ.Տ.
/ ստորագրություն /

Կատարող _____ Ա.Ա.
/ ստորագրություն /

»_« _____ 200__թ.